ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 26. Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան

1. Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան (այսուհետ՝ բարդ լիցենզիա) լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:
2. Բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար սույն օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:
3. Բարդ լիցենզիան տրվում է անժամկետ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: ~~Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման կամ ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիաները տրվում են երեք տարի ժամկետով, իսկ տրամադրված լիցենզիաների ժամկետը երկարաձգվում է 5 տարի ժամկետով:~~
4. Սույն օրենքով նախատեսված դեպքերում բարդ լիցենզիան կարող է տրվել մրցույթով, որն իրականացվում է լիցենզավորման կարգերին համապատասխան:
5. Բարդ լիցենզիաները տրվում են լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա: Լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունները տրվում են սույն օրենքով և լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրություններով նախատեսված կարգով:
6. Բարդ լիցենզիաները տրվում են միայն սույն օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված գործունեության համապատասխան տեսակներով զբաղվելու համար:
(26-րդ հոդվածը լրաց. 17.09.09 ՀՕ-169-Ն)

Հոդված 43. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը

1. Գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է սույն հոդվածի աղյուսակում:
2. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակ

Հ/հ	Լիցենզավորման ենթակա գործունեության	Լիցեն-զավո-րող	Լիցեն-զիայի տեսակը	Ոլորտ	Փորձա-քննու-թյան	Մրցու-թային կար-	Որակա-վորման պահանջ	Հաշվե-տվու-թյան	Վայրի պա-հանջ

	տեսակը	մար-մինը			պահանջ	գով		պահանջ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ	Բ	-		-	Ո	Հ	Վ
3.	Հրազործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր	ԿՄ	Պ	-	-	-	-	-	-
~~4.~~	~~Զենքի արտադրություն~~	~~ՀՀԿ~~	~~Բ~~	~~-~~	~~Փ~~	~~-~~	~~-~~	~~Հ~~	~~Վ~~
4.	Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրություն	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
5.	Զենքի առևտուր	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ
6.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ		Ո	Հ	Վ
7.	Թմրամիջոցների կամ հոգեմետ	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ

	նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր								
8.	Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	-
9.	Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	-
10.	Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն (ռազմական նշանակության արտադրանքի առևտրի գործընթացում այլ անձանց համար պայմանագրերի կնքման բանակցությունների վարման, ինչպես նաև այդ արտադրանքի ձեռքբերման, փոխանցման և վաճառքի օժանդակման ծառայությունների	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	-

	մատուցում)								
11.	Ռազմական նշանակության արտադրանքի արտադրություն	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
12.	Հրաձգարանի գործարկում	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
13.	Զենքի հարդարում	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ